

արարմունքից, թէն զգում էր, որ դա աւելի լաւ կերպով կարող  
չէր վերջանալ: «Գոնէ ալստեղ ցից եղած չի լինիլ»—մխի-  
թարում էր նա ինքն իրեն. սալդքանից էլ գոհ եմ: Ծանր,  
անլարմար լռութիւնը շարունակում էր: Երկուսն էլ լաւ  
ղրութեան մէջ չէին: Երկուսն էլ գիտէին, որ միւսը իւր  
միտքը հասկանում է: Բարեկամների համար ալդ բանը հա-  
ճելի է, բայց շատ անհաճելի է ոսոխների համար, մանաւանդ  
երբ ոչ բացաղբութիւն տալ կարելի է, ոչ էլ իրարից բաժա-  
նուել:

—Հո ոտներդ պինդ չեմ կապել,—վերջապէս հարցրեց  
Բաղարովը:

—Ոչ, ոչինչ, շատ լաւ է,—պատասխանեց Պաւէլ Պետ-  
րովիչը և, մի քիչ լեռու, տեւացրեց.—եղբօրս կարող չենք  
խաբել, պէտք է ասել, որ քաղաքական խնդրի պատճառով  
ենք կռուել:

—Շատ բարի,—ասաց Բաղարովը.—կարող էք ասել,  
որ ես բոլոր անգլիստներին անարգեցի:

—Եւ շատ էլ լաւ կլինի, ի՞նչ էք կարծում, ինչ է մը-  
տածում մեր մասին այս մարդը,—շարունակեց Պաւէլ Պետրո-  
վիչը ցոյց տալով այն գիւղացուն, որը մենամարտից մի քա-  
նի ընդէն առաջ Բաղարովի մօտով քշել, տարել էր ոտները  
կապած ձիերը, և ալժմ ճանապարհով լեռ դառնալիս լաղա-  
ներին տեսել, ու գլխարկն հանել, գլուխ էր տուել:

—Ես ինչ գիտեմ,—պատասխանեց Բաղարովը.—ամենից  
հաւանականն այն է, որ ոչինչ չի մտածում: Ռուս գիւղացին  
այն խօհրդաւոր անծանօթն է, որի մասին մի ժամանակ  
այնքան երկար խօսել է տիկին Ռատկլիֆֆը: Ո՞վ կարող է  
հասկանալ: Նա ինքն էլ իրեն չի հասկանում:

—Հ'ը, ալդպէս էք կարծում,—սկսեց Պաւէլ Պետրովիչը  
և լանկարծ բացականչեց.—մի մտիկ տուէք, ինչ է արել ձեր  
լիմար Պետրը: Լիքալիս սրարշաւ ալստեղ է գալիս:

Բաղարովը ետեւ դարձաւ և տեսաւ Նիկալայ Պետրովի-  
չին կառքի մէջ, գոլնը սպրտնած: Դեռ կառքը չկանգնած  
նա ցած թռաւ ու դէպի եղբայրը վազ տուեց:

—Այս ինչ բան է,—ասաց նա լուղուած ձայնով,—այս  
ինչ բան է, Եւգենիյ վասիլիչ:

—Ոչինչ չկալ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը,—ի-

զուր քեզ անհանգիստ են արել։ Մենք պարոն Բաղարովի հետ մի փոքր կռիւ ունեցանք և ես զրա համար մի փոքր պատժուեցաւ։

—Եւ ինչից ծագեցաւ դա, ի սէր Աստուծոյ։

—Ինչպէս ասեմ։ Պարոն Բաղարովը սեր Ռոբերտ Պիլի մօտին անարդանքով խօսեց։ Շտապեմ աւելացնելու, որ ալս բոլոր եղածի մէջ մեղաւորը մենակ ես եմ, իսկ պարոն Բաղարովը իրեն շատ լաւ պահեց։ Ես եմ նրան մարտի կոչել։

—Բալց քու վրադ արիւն կալ։

—Ի՛նչ է, կարծում էիր իմ երակիս մէջ ջնւր է հոսում։ Ասենք ալս արիւն առնեն ինձ օգուտ էլ է։ Այնպէս չէ, բժիշկ։ Օգնիր ինձ կառք նստելու և մեղամարտութեան մէջ ընկնել պէտք չէ։ Վաղը առողջ կ'ըլինեմ։ Ա՛յ, ալսպէս, շատ լաւ։ Քչի՛ր, կառապան։

Նիկալալ Պետրովիչը ոտքով կառքի ետեւից գնաց։ Բաղարովն ուզում էր ետ մնալ։

—Պէտք է ձեզ խնդրեմ, որպէս զի մինչև քաղաքից բժիշկ գալը զուր նաչէիք եղբօրս,—ասաց նրան Նիկալալ Պետրովիչը։

Բաղարովը լուռ զլուխը խոնարհեց։

Մի ժամ անց, Պաւէլ Պետրովիչն արդէն ոտքը հմուտ կերպով կապուած, պառկել էր անկողնի մէջ։ Բոլոր տունը տակն ու վրալ էր եղել։—Ֆենիչկայի սիրտն էր անցել։ Նիկալալ Պետրովիչը ծածուկ ձեռքի ոսկրներն էր ջարդոտում, իսկ Պաւէլ Պետրովիչը ծիծաղում էր. հանագներ անում, մաճաւանդ Բաղարովի հետ. նա հագել էր բւտխտէ բարակ շապիկ, առաւօտեայ չքեղ կապան ու ֆասը, չէր թողնում, որ պատուհանների վարագոյրները բաց թողնեն, և զուարճալի կերպով զանգատում էր, որ ստիպուած էր կերակրեղէնից զրկուել։

Սակայն գիշերը վրան տաքութիւն եկաւ. զլուխը ցաւեց։ Քաղաքից բժիշկ եկաւ։ (Նիկալալ Պետրովիչը ականջ չէրեց եղբօր ասածին, հէնց Բաղարովը ինքն էլ ալդ չէր ուզում. նա ամբողջ օրը, դեղնած ու ժանտ դէմքով, նստած էր իւր սենեակում և մ'ալն շատ կարճ միջոցով գէում էր հիււանդի մօտ, մի երկու անգամ հանդիպեցաւ Ֆենիչկային, բալց սա սարսափահար լիտ էր ընկրկում)։ Նոր բժիշկը խորհուրդ տոււց գործ ածել զովարար խմիչքներ, սակայն նա ևս հաստատեց Բաղարովի ասածը, թէ ոչինչ վտանգ չկալ։

Նիկալալ Պետրովիչը նրան ասաց, որ եղբայրը անզգուշութեամբ ինքն է իրեն վիրաւորել, որին բժիշկը պատասխանեց՝ «Հմ», բայց խնդիրն էլ մի 25 ռուբլիանոց ստանալով, ասաց. «Հմ. աղպիսի բան լաճախ է պատահում, ճիշտ որ»:

Գիշերը ոչ ոք ոչ պառկեց և ոչ էլ հանուեց. Նիկալալ Պետրովիչը շարունակ մատներն վրայ մտնում էր եղբոր մօտ և մատների վրայ էլ դուրս գալիս: Պաւլ Պետրովիչը շատ անգամ մոռանում էր ու թեթեակի տնջում, նրան ֆրանսերէն ասում՝ „coucher-vous,“ (պառկեցէք) — և խմելու բան էր խնդրում: Մի անգամ Նիկալալ Պետրովիչը Ֆենիշկային ստիպեց, որ բաժակով լիմոնադ տալ նրան. Պաւլ Պետրովիչը աչքերը լառած նայեց նրան, և ամբողջ բաժակը մինչև տակը դատարկեց: Առաւօտեան դէմ տաքութիւնը փոքր-ինչ աւելացաւ և հիւանդը սկսաւ թեթեակի զառանցել, Պաւլ Պետրովիչը սկիզբները անկապ խօսքեր էր արտասանում. լետուլ լանկարծ բաց արաւ աչքերը. և, եղբորը տեսնելով իւր անկողնի մօտ, որ հոգածութեամբ իւր վրայ էր խոնարհած, ասաց. — Եւնայէս չէ, Նիկալալ, որ Ֆենիշկան ընդհանուր նմանութիւն ունի Նեւլիի հետ:

— Ի՞նչ Նեւլի, Պաւլ:

— Ինչպէս թէ ինչ Նեւլի, Իշխանուհի Ռ... ն. Մանաւանդ զէմքի վերի մասը, C'est de la même famille. (միևնոյն ընտանիքից է):

Նիկալալ Պետրովիչը ոչինչ չպատասխանեց, բայց ինքն իրեն մտածեց, թէ ինչքան երկարաժամ են լինում մարդկանց մէջ հին զգացողութիւնները՝ «Տես, երբ երևան եկան», մտածեց նա:

— Ո՛հ, ինչպէս սիրում եմ ալդ դատարկ էակին, — հառաչեց Պաւլ Պետրովիչը, թախծութեամբ ձեռները գլխի ետևը ձգելով: — Ես չեմ կարող թուլ տալ, որ պրտկերեսին մէկը (անդգնի կպչել...), — թոթովեց նա մի քիչ լետուլ:

Նիկալալ Պետրովիչը միայն հառաչեց. նա չէր էլ կասկած տանում, թէ ումն էին վերաբերում ալդ խօսքերը:

Միւս օրը, ժամը ութին Բազարովը եկաւ Նիկալալ Պետրովիչի մօտ. նա արդէն իր իրերը կապել-կապկպել էր և իւր բոլոր գորտերը, միջատները և թռչունները բաց թողել:

— Մնաս բարովի էք եկել, — ասաց Նիկալալ Պետրովիչը՝ նրան դիմաւորելու համար տեղից վեր կենալով:

—Շատ ճիշտ է:

—Ես ձեր վարմունքը հասկանում եմ, և հաւանում եմ: Խեղճ եղբայրս, իհարկէ, մեղաւոր է, և զրա համար էլ իւր պատիժն ստացաւ: Նա ինքն ասաց ինձ, թէ ձեզ արնպիսի դրութեան մէջ է դրել, որ դուք «լլապէս վարուել չէիք կարող»: Հաւատացած եմ, որ կարող չէիք խոս տալ արդ մեհամարտից, որ... որը որոշ չափով բացատրւում է լոկ արն հակառակութեամբ, որ կար ձեր հալեացքների մէջ: (Նիկալայ Պետրովիչը արս ասելիս շփոթւում, բառերը չէր գտնում: Եղբայրս հինութ մարդ է, դիւրագրգիւ և լամառ...: Էլի փռք Աստուծոյ, որ բանն արպէս վերջացաւ: Ես, ինչ որ հարկաւորն է, արել եմ, որպէսզի ձ սնը դուրս չգա...:

—Ես ձեզ կտամ իմ հասցէս: Գուցէ բան պատահի, հարկաւոր լինի,—անհող կերպով նկատեց Բազարովը:

—Սոս ունիմ, որ ոչինչ չի պատահիլ, Եւգենիյ Վասիլիւիչ...: Շատ ցաւում եմ, որ ձեր արտեղ մնալը արպէս... արպիսի վախճան ունեցաւ: Սա աւելի ևս ինձ վիշտ է պատճառում նրա համար, որ Արկադիին...:

—Ես երեկ նրա հետ կտեսնուեմ,—պատասխանեց Բազարովը, որին արպիսի «բացադրութիւններն» ու «վշտակցութիւնները» անհամբերութեան զգացմունք էին պատճառում:—Իսկ եթէ ոչ, խնդրում եմ, բարեէք նրան և ընդունէք իմ վշտակցութիւնս:

—Ես էլ խնդրում եմ...—գլուխ տալով պատասխանեց Նիկալայ Պետրովիչը: Բայց Բազարովը նրա խօսքի վերջին չապասեց ու դուրս գնաց:

Պաւէլ Պետրովիչն իմանալով, որ Բազարովը գնալու է, ցանկութիւն լալտեց նրան տեսնելու, և նրա ձեռքը սեղմեց: Բայց Բազարովը արս անգամ էլ սառցի նման սառն էր: Նա հասկացաւ, որ Պաւէլ Պետրովիչն ուզում էր մեծահոգութիւն ցոյց տալ: Ֆենիչկայի հետ չկարողացաւ բարով մնալ անել՝—միայն պատուհանից իրար նալեցան: Նրան թուաց, թէ Ֆենիչկայի դէմքը տխուր էր: Երեկ կ'կորչի», ասաց նա ինքն իրեն...: Եւէհ, մի կերպ դուրս կպրծնի»: Մինչդեռ Պետրը արն աստիճան զգացուեցաւ, որ գլուխը նրա ուսին դրած լաց էր լինում, մինչև որ Բազարովը նրան չղաղարեցրեց հարցնելով. «Աչքդ հո աղբիւր չէ», իսկ Դունեաչան հո, իւր լուզմունքը ծածկելու համար ստիպուած էր անտառ:

փախչելու Բազարովը, որ այս բոլոր վշտի պատճառն էր, բարձրացաւ կառքը, ծխախոտ կպցրեց, և երբ որ չորս վերստ անցնելուց լեռու, ճանապարհի պտուտքին, վերջին անգամ նրա աչքովն ընկաւ մի շարքի վրայ ձգուած Կոստինովի ագարակն և նրա նորաշէն բնակարանի շէնքը, նա միայն թքեց ու «անիծեալ ազնուականներ» ասելով աւելի պինդ փաթաթուեց իւր վերարկուի մէջ:

Շուտով Պաւէլ Պետրովիչի դրութիւնը թեթևացաւ. բայց հարկադրուած էր մէկ շաբաթի չափ անկողնի մէջ մնալ. Նա բաւական համբերութեամբ էր տանում իւր, ինչպէս ինքն էր ասում, գերութիւնը, միայն խիստ հոգս էր տանում իւր արդ ու զարդի վրայ ու շարունակ պատուիրում էր, որ օդուկոլոն սրսկեն տան մէջ. Նիկալաւ Պետրովիչը ամսագրներ էր կարդում նրա մօտ, Ֆենիչկան առաջուակ նման ծառայում էր նրան, բերում էր բուլիօն, լիմոնադ, թերխաշ ձու, թէյ. բայց ամեն անգամ, որ նա մտնում էր Պաւէլ Պետրովիչի սենեակը, գաղտնի սարսափ էր ընկնում վրան: Պաւէլ Պետրովիչի անակնկալ վարմունքը տանը եղողներին ամենքին էլ վախեցրել էր, իսկ Ֆենիչկային հո՛ւ ամենքից աւելի. մնակ Պրոկոֆիչն էր, որ չէր չփութուել և պատմում էր, թէ առաջներն էլ էին աղաները շատ անգամ կռտղւում, բայց միայն ազնիւ աղաներն էին կռտղւում իրար հետ, իսկ այսպիսի թուկից փախածներին, նրանց կոպիտ վարմունքի համար, պատուիրում էին տանել ախոռ ու ծեփ քաշելո՞ւ:

Ֆենիչկայի խիղճը համարեա թէ չէր խախտւում. բայց ժամանակ առ ժամանակ տանջւում էր մտածելով, թէ կռուի իսկական պատճառն ինքն է. մէկ էլ որ Պաւէլ Պետրովիչը խիստ տարօրինակ աչքով էր մտիկ տալիս իրեն... այնպէս որ, մինչև անգամ մէջքը նրան զարձրած միջոցին անգամ զգում էր նրա հալեացքը: Ներքին անդադար լուզմունքից Ֆենիչկան նիհարեցաւ և ինչպէս սովորաբար լինում է, աւելի սիրունացաւ:

Մի անգամ,— առաւօտեան էր,— Պաւէլ Պետրովիչն իրան լաւ էր զգում ու անկողինը թողեց, բաղկաթուի մէջ նստաւ. Նիկալաւ Պետրովիչը նրա առողջութիւնը հարցնելուց լեռու, բալ էր գնացել: Ֆենիչկան բաժակով թէյը բերեց ու, սեղանի վրայ դնելուց լեռու, ուզում էր գնալ. Պաւէլ Պետրովիչը նրան չթողեց:

—Այդ ուր էք արդէս շտապում, Ֆեդոսիա Նիկալաւնա,—  
սկսեց նա,—ինչ է, դժուր ունիք:

—Ոչ... Պէտք է թէլ անեմ:

—Առանց ձեզ Դուսիաշան էլ կարող է արդ բանն ա-  
նել, եկէք, փոքր-ինչ հիւանդի մօտ նստէք: Ի դէպ ձեզ հետ  
խօսելիք ունեմ:

Ֆենիլկան աւձալն նստեց բաղկաթոռի ծալքին:

—Վաղուց է ուղում էի ձեզ հարցնել,—ասաց Պաւէլ  
Պետրովիչը իւր բեխի ծալրը ձիգ տակով,—կարծես թէ դուք  
ինձանքի վախենում էք:

—Ե՛ս...

—Այդ դուք երբէք երեսիս ուղիղ չէք նայում. ասես  
թէ ձեր խիղճը մաքուր չլինի:

Ֆենիլկան կարմրեցաւ, բայց նախեցաւ Պաւէլ Պետրովի-  
չի երեսին: Պաւէլ Պետրովիչը նրան մի տեսակ տարօրինակ  
երեւաց, և սիրտը իւր կրծքի մէջ կամացուք թրթռաց:

—Խիղճերդ մաքուր է հո,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Ինչո՞ւ չպիտի մաքուր լինի որ,—չնչաց Ֆենիլկան:

—Քիչ պատճառ կալ, Բայց ո՞ւմ առաջը կարող էք դուք  
մեղաւոր լինել, Ի՞մ առաջս: Այդ անհաւանական բան է: Այս-  
տեղ տան մէջ եղող ուրիշ անձերի առաջ: Այդ էլ չլինելու  
բան է: Հա, դուք եղբօրս առաջ:

—Բայց դուք նրան հո սիրում էք:

—Սիրում եմ:

—Բոլոր հոգով, բոլոր սրտով:

—Ես բոլոր հոգովս սիրում եմ Նիկալայ Պետրովիչին:

—Ուղիղ, Հապան մի ինձ մտիկ տուէք, Ֆենիլկա (առա-  
ջին անգամ էր, որ նրան արդէս էր անուանում...), Գիտէ՞ք  
հո—սուտ ասելը մեծ մեղք է:

—Ես սուտ չեմ ասում, Պաւէլ Պետրովիչ: Որ Նիկալայ  
Պետրովիչին էլ սիրելու չլինեմ, էլ ո՞ւր եմ ապրում աշխարհիս  
վրայ:

—Եւ ոչ ոքի հետ չէք փոխիլ նրան:

—Ո՞ւմ հետ կարող եմ նրան փոխել:

—Քիչ մարդ կալ, Հէնց ասենք արն պարոնի հետ, որ  
ախտեղից դնաց:

Ֆենիլկան վեր կացաւ տեղիցը

—Տէր Արարիչ Աստուած, ինչք է արն ինձ տանջածներդ,

Պաւէլ Պետրովիչ, ի՞նչ եմ արել ձեզ: Ինչպէս կարելի է մի ալդպիսի բան ասել...:

—Ֆենիչկա, տխուր ձայնով ասաց Պաւէլ Պետրովիչը,—  
ախր ես տեսալ...:

—Ի՞նչ տեսաք...:

—Այնտեղ... ղումնոցում:

Ֆենիչկան մինչև մաղերի արմատը, մինչև ականջի տակը  
կարմրատակեցաւ:

—Ես ի՞նչ մեղք ունեմ,—հաղիւ հաղ կարողացաւ ասել նա:

Պաւէլ Պետրովիչը մի փոքր վերկացաւ տեղից:

—Մեղք չունի՞ք: Չէ՞: Ամենեքն:

—Աշխարքիս երեսին ես միմիայն Նիկալայ Պետրովի-  
չին եմ սիրում, և մինչի մահս էլ պիտի սիրեմ,—լսնկարծա-  
կան սաստկութեամբ ասաց Ֆենիչկան, մինչ հեծկլտոցը եկել,  
խեղդել էր կոկորդը:—Իսկ այն որ տեսել էք, ես ան կեան-  
քում կասեմ, որ ալդտեղ մեղք չեմ ունեցել, չունեմ, ու լաւ  
է, որ հէնց այս բոպէիս՝ գետինը պատուի, սաղ-սաղ մէջը  
գնամ, քանց թէ ալդպիսի կասկած լինի վրաս, ու ես իմ բա-  
րեարիս, Նիկալայ Պետրովիչի առաջ...:

Բայց ալստեղ ձայնը նրան դաւաճանեց, և միևնույն փա-  
մանակ էլ զգաց, որ Պաւէլ Պետրովիչը քաշեց իւր ձեռքն ու  
հուպ տուեց...: Ֆենիչկան մտիկ տուեց նրա երեսին ու ա-  
պուշ կտրեցաւ: Պաւէլ Պետրովիչը առաջուանից էլ աւելի  
սալրդնած էր: Թաշերը փալլում էին և ամենից զարմանալին  
այն էր, որ արտասուքի խոշոր, մեն-մենակ մի կաթիլ երեսի  
վրայով ցած էր գլորւում:

—Ֆենիչկա,—ասաց նա մի տեսակ շշուշով,—սիրեցէք,  
սիրեցէք եղբօրս: Թէտ բարի, շատ պատուական մարդ է: Աշ-  
խարքիս երեսին ոչ մի մարդու համար չդաւաճանէք նրան,  
ոչ-ոքի ասածներին մտիկ չանէք: Մէկ միտք արէք, թէ ի՞նչ  
սարսափելի բան է սիրել, և սէր չստանալ: Երբէք չթողնէք  
իմ խեղճ Նիկալայիս:

Ֆենիչկայի աչքերը ցամաքեցան և վախն էլ անցաւ,—այն-  
քան մեծ եղաւ նրա զարմանքը: Բայց ի՞նչ զգաց նա, երբ որ Պաւէլ  
Պետրովիչը, Պաւէլ Պետրովիչն ինքը նրա ձեռքը իւր չրթունքնե-  
րին հուպ տուեց, և ալդպէս էլ, առանց համբուրելու, կպած  
մնաց, ու միայն հաղիւ երբեմն ջղաձգաբար հոգոց էր հանում...:

«Տէր ողորմեա», մտածեց Ֆենիչկան, «հիւանդութեան զրգիւ հո չէ»:

Իսկ այդ միջոցին մի ամբողջ կորած կեանք շարժուել էր Պաւէլ Պետրովիչի մէջը:

Արագ քայլերից աստիճանները ճոնչացին... Պաւէլ Պետրովիչը հրեց, հեռացրեց իրանից Ֆենիչկային, և դուռը լետ դցեց բարձի վրայ: Դուռը բացուեց և երևաց Նիկայայ Պետրովիչը ուրախ, զուարթ, կարմրած, Միտեան, նույնպէս հօր նման զուարթ ու կարմրած, չապկանց թռչկոտում էր նրա կրծքի վրայ ու սեւի ոտները դէմ տալիս նրա գլուղական վերարկուի խոշոր կոճակներին:

Ֆենիչկան վաղեց դէպի նա ու ձեռներով նրան ու որդուն փաթաթուելով դուռը դրեց Նիկայայ Պետրովիչի ուսին: Սա զարմացաւ, որովհետեւ ամօթխած ու համեստ Ֆենիչկան երբէք ուրիշի առաջ դգուանք չէր արտաւայտում:

— Այս քնչ է եղել քեզ, — ասաց նա և, եղբօրը նայելով: Միտեային տուեց Ֆենիչկայի գիրկը. — հիւանդութիւնդ հօ չի՞ ծանրացել, — հարցրեց նա Պաւէլ Պետրովիչին մօտ դալով:

Պաւէլ Պետրովիչը դէմքը թաքցրեց բատիստէ թաշկի-նակի մէջ:

— Ոչ... ասլոյէս... ոչինչ չկալ...: Ընդհակառակն, աւելի լաւ եմ ալժմ:

— Ի դուր ես շտապել, անկողինը թողած բազկաթռի մէջ նստել: Ա՛յդ ուր ես գնում, աւելացրեց Նիկայայ Պետրովիչը Ֆենիչկային դառնալով. բայց սա արդէն իւր ետեւից թրկացրեց դուռը. — Նա եկել էի, որ իմ հսկայիս քեզ ցոյց տամ. նա արդէն հօրեղբօրը կարօտել էր: Այդ ինչն Ֆենիչկան նրան դուրս տարան: Բայց քնչ է եղել քեզ, Զլինի ալստեղ ձեր մէջ մի բան է պատահել:

— Նղբալր, — հանդիսաւոր կերպով ասաց Պաւէլ Պետրովիչը:

Նիկայայ Պետրովիչը ցնցուեց, Նա սկսաւ իրան վատ զգալ. — Ինքն էլ չգիտենալով թէ ինչն:

— Նղբալր, — կրկնեց Պաւէլ Պետրովիչը, — ինձ խօսք տուր, որ իմ մի խնդիրքս կ'կատարես:

— Ի՞նչ խնդիրք: Ասմ:

— Ծանր խնդիր է դա, իմ հասկացողութեամբ կեանքիդ բոլոր երջանկութիւնը դրանից է կախուած: Այս բոլոր ժա-

մանակս շատ եմ մտմտացել այդ մասին, որ այժմս ուզում եմ ասել քեզ... Եղբայր, կատարիր քու պարտականութիւնդ, աղնիւ ու պատուաւոր մարդու պարտաւորութիւնդ, վերջ դիր այդ զայթակողութեան ու վատ օրինակին, որ տալիս ես դու, որ դու մարդկանց մէջ ամենապատուականն ես:

— Ի՞նչ ես ուզում ասել, Պաւէլ:

— Ամուսնացիր Ֆենիշկայի հետ... Նա սիրում է քեզ, նա—քու որդուդ մայրն է:

Նիկալալ Պետրովիչը մի քալլ լեռ քաշուեցաւ ու ձեռներն իրար խփեց:

— Դժու ես ալս ասողը, Պաւէլ, դժու, որին ես միշտ անողոք հակառակորդ եմ կտրծել այդպիսի ամուսնութիւններին: Այս դժու ես ասողը. Բալց միթէ չգիտես, որ միմիայն քեզ լարդելուցս էր, որ մինչև այժմ չէի կատարում այն, ինչ որ դու իրաւամբ իմ պարտաւորութիւնս անուանեցիր:

— Ի զհր ես այդ դէպքում ինձ լարդել,—տխուր՝ ժըպիտով պատասխանեց Պաւէլ Պետրովիչը:—Նս էլ եմ սկսում կարծել, որ Բաղարովը իրաւացի էր, երբ երեսօվս էր տալիս իմ աղնուականութիւնս: Ոչ, սիրելի եղբայր, հերիք կտրտուենք ու հասարակութեան կարծիքի մասին մտածենք, մենք արդէն ծերացած ու խաղաղ մարդիկ ենք. ժամանակ է այդ ունայն բաները մի կողմ ձգել. Իսկ որ քու ասածիդ պէս, սկսենք մեր պարտաւորութիւնը կատարել, և դու տես որ, դեռ կարող ենք երջանկութիւն էլ վաստակել:

Նիկալալ Պետրովիչը վրայ ընկաւ իւր եղբորն ու սկսաւ նրան գրկախառնել:

— Դու իմ աչքս բոլորովին բացիր,—բացախանչեց նա:— Ի դուր հո չէի պնդում, թէ աշխարհիս երեսին քեզ նման բարի ու խելօք մարդ չկայ, իսկ այժմս տեսնում եմ, որ դու ինչքան մեծաօղի, այնքան էլ խոհեմ մարդ ես եղել:

— Զգույ, զգույ,—ընդհատեց նրա խօսքը Պաւէլ Պետրովիչը.—խոհեմ եղբորդ վէրքը մի բանալ, որ լիսուն տարեկան հասած՝ ենթասպալի նման մենամարտի էր դուրս եկել: Ուրեմն վճռուած բան է՝ Ֆենիշկան կլինի իմ... belle soeur (հարսը):

— Իմ սիրելի Պաւէլս, Բալց ինչ կասէ Արկադիին:

— Արկադիին. նա շատ ուրախ կլինի, Թէպէտ ամուսնութիւնը նրա սկզբունքներին հակառակ է, բալց դրա փոխա-

րէն հաւասարութեան զգացմունքը շուրտած կլինի նրա մէջ. եւ արդարեւ, սա ինչ կաստալականութիւն է au dix-neuvieme siècle (սոսանիններորդ դարում):

—Ախ, Պաւէլ, Պաւէլ, թող մէկ էլ համբուրեմ քեզ: Մի վախի, զգուշ կանեմ:

Երկու եղբայր համբուրուեցան:

—Ի՞նչ ես կարծում, քու ալդ մտադրութիւնդ ալժամ և եթ չլատնենք Ֆենիշկալին,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Ի՞նչ կալ շտապելու,—պատասխանեց Նիկալալ Պետրովիչը.—Ալդ մասին հո մէջներդ խօսք չի եղել:

—Մեր մէջ խօսակցութիւն: Quelle idée, (ինչպիսիք միտք):

—Դէ շատ լաւ ուրեմն: Նախ և առաջ մի առողջացիր, իսկ ալտ բանը ձեռներիցս չի փախչիլ. դեռ պէտք է մի լաւ միտք անել, մտմտալ...:

—Արդէն հո վճռել ես:

—Իհարկէ վճռել եմ, և հոգով չափ շնորհասլարտ եմ քեզ: Ալժամ ես կգնամ. քեզ հանգստութիւն է պէտք. ամեն տեսակ լուզում էլ քնտս է քեզ... Բալց դեռ կխօսենք: Քնիր հոգիս, Աստուած քեզ առողջութիւն տալ:

Մինչո՞ւ է նա ինձ ալսքան շնորհակալ լինում, մենակ մնալով մտածեց Պաւէլ Պետրովիչը. Վարծես թէ ալդ բանն իրեն ձեռքը չէր: Իսկ հէնց որ նա ամուսնացաւ, ես էլ կը հեռանամ, կգնամ մի տեղ, Դրեզդէն կամ Ֆլորէնցիա, և կը մնամ ալնտեղ, մինչև որ սատկեմ:

Պաւէլ Պետրովիչը օղբկոլոնով թիջեց ճակատն, ու աչքը խփեց: Նրա դեղեցիկ, նիհարած գլուխը, ցերեկուալ պալծառ լուսով լուսաւորուած, մեռածի նման, ընկած էր սպիտակ բարձի վրալ...: Նա հէնց մեռած էլ էր:

## XXV

Նիկօլլսկոյէ գիւղում, պարտիզում բարձրուղէյ հացենու հովին, փալտէ նստարանի վրալ նստած էին Վատեան ու Արկադիին. նրանց մօտ գետնին պառկած էր Ֆիֆին ալն գեղարուեստական կիսաբոլորակ ձևով, որ լատնի է որսորդների մէջ չլուսկապարիկի պառկուածք» անունով. Արկադիին էլ, Վատեան էլ լուռ էին. Արկադիին ձեռին բռնած ունէր կիսաբաց մի գիրք:

իսկ Կատեան կողովի մէջ մնացած սպիտակ հացի փշրանք-  
ները հաւաքում էր ու ձգում ճնճղուկների փոքրաթիւ ընտա-  
նիքի առաջ, որոնք, իրենց լատուկ վախկոտ խիզախութեամբ,  
թուչկոտում էին և ճռուողում ուղիղ նրանց ոտների տակ:  
Մեղմ քամին, տատանելով հացենու տերևները, թէ մթին ճա-  
նապարհի վրայ և թէ ֆիֆիի դեղին մէջքի վրայ լետ ու ա-  
ռաջ էր անում լոխի բաց ոսկեգոյն բծերը. միապաղաղ  
ստուերն ընկած էր Արկադիլի ու Կատեալի վրայ. հազիւ եր-  
բեմն միայն պայծառ շերտը բոցակիզում էր Կատեալի մա-  
ղբերի մէջ: Նրանք լուռ էին. և հէնց նրանց ակդ լուռ մնալու  
մէջ, նրանց կողք կողքի նստուածքի մէջ վստահ մտերմու-  
թիւն էր երևում.—ասես թէ նրանցից ոչ մէկն էլ չէր մտա-  
ծում միւսի մասին, մինչդեռ իրանց սրտում ուրախ էին, որ  
միմեանց մօտ են: Այն օրուանից, որ նրանց վերջին անգամ  
տեսել էինք, նրանց դէմքերն էլ փոխուած էին.—Արկադիլին  
աւելի խաղաղ էր թւում, Կատեան՝ աւելի առուզ, համարձակ:

—Այնպէս չէ, —սկսեց Արկադիլին, —հացենին ռուսերէն  
շատ լարիւր անուն ունի՝ եասէյն (պայծառ), ոչ մի ծառ այն-  
պէս պայծառ ու պարզ չի երևում օդի մէջ, ինչպէս սա:

Կատեան աչքերը վերև բարձրացրեց ու ասաց. «Այո»,  
իսկ Արկադիլին մտածեց. «Այ, սա ինձ չի նախատում, որ գե-  
ղեցիկ խօսքերով եմ միտքս արտալատում»:

—Ես Հայնէի գրուածքները չեմ սիրում, —խօսեց Կատե-  
ան՝ աչքով Արկադիլի ձեռքի գիրքը ցոլց տալով.—ոչ ճին  
ժամանակ, երբ լաց է լինում, ոչ այն ժամանակ, երբ ծիծաղում  
է. հապա սիրում եմ, երբ նա մտախոհ է ու թախծալի:

—Իսկ ես սիրում եմ, երբ նա ծիծաղում է, —նկատեց  
Արկադիլին:

—Այդ ձեր երգիծական հին ուղղութեան մնացորդն է...  
(Հին մնացորդ, —մտածեց Արկադիլին, —Բաղարովը չլսի): Կա-  
ցէք, մենք ձեզ կփոխենք:

—Ո՞վ է ինձ փոխելու. Դձ՝ք:

—Ո՞վ, քօրս, Պորֆիրի Պլատոնովիչը, որի հետ դուք  
այլ ևս դադարել էք վիճելուց. մօրաքօրս, որին դուք երեկ  
չէ միւս օրը եկեղեցի տարաք:

—Կարող չէի հո մերժել: Իսկ ինչ կվերաբերուի Աննա  
Սերգէնային, գիտէք, որ նա ինքն էլ շատ բաների մէջ  
համաձայնում էր Բաղարովի հետ:

—Այն ժամանակ՝ ձեզ նման քոյրս էլ նրա ազդեցութեան տակ էր։

—Ինձ նման։ Միթէ նկատում էք, որ ես ավժամ նրա ազդեցութեան տակից դուրս եմ գալիս։

Կատեան լռեց։

—Գիտեմ,— շարունակեց Արկադիին,— նա երբէք ձեզ դուր չէ եկել։

—Ես կարող չեմ նրա մասին դատողութիւն տալ։

—Գիտէք ինչ է, Կատերինա Սերգէենա։ Ամեն անգամ, որ դուք արդու էք ասում, երբէք ձեր ասածին չեմ հաւատացել։ Չկալ մի արնալիս մարդ, որի մասին մենք ամեն մէկս էլ չը կարողանանք դատողութիւն տալ։ Դուք ուզում էք միայն խօսքը կտուրը ձգել։

—Թէ որ արդէս է, ուրեմն պիտի ասեմ, որ նա... չէ թէ ինձ դուր չի գալիս, հապա զգում եմ, որ նա էլ ինձ օտար, ես էլ նրան... հէնց դուք ինքներդ էլ օտար էք նրան։

—Ինչո՞ւ։

—Ի՞նչպէս ասեմ... Նա դիշատիչ է, մինչդիռ ես ու դու— ընտանի ենք։

—Ես էլ եմ ընտանի։

Կատեան զլխով արաւ։

Արկադիին գլուխը քորեց։

—Ախր, Կատերինա Սերգէենա, իսկապէս ասած ձեր ասածը վիրաւորական է։

—Միթէ դուք դիշատիչ կուղէիք լինել։

—Գիշատիչ չէ, հապա ուժեղ, եռանդուն։

—Այդ բանը ուզելով չի լինիլ... Ահաւասիկ ձեր ընկերը, նա չէ ուզում արդպէս լինել, բայց արդ բանը նրա մէջն է։

—Հմ, ուրեմն կարծում էք, թէ նա մեծ ազդեցութիւն ունէր Աննա Սերգէենայի վրայ։

—Այո։ Բայց ոչ ոք կարող չէ նրա վրայ ընդ երկար ազդեցութիւն ունենալ,— աւելացրեց Կատեան ցած ձայնով։

—Ինչո՞ւ էք արդպէս կարծում։

—Քոյրս շատ հպարտ է... արդ չէր ասելիքս... նա մեծ նըշանակութիւն է տալիս իւր անկախութեան։

—Ո՛ւ չէ իւր անկախութեան մ.ծ նշանակութիւն տալիս— որ, հարցրեց Արկադիին, ու միենոյն ժամանակ էլ մտքովն անցկացրեց. «Ինչի է պէտք դա», «Ինչի է պէտք դա» մտա-

ձեց նաև Կատեան, Այն երիտասարդները, որոնք լաճախ համերաշխ ու համակարծիք են լինում, շարունակ նրանց գըլուխներում էլ միատեսակ մտքեր են ծնում:

Արկադիին ժպտաց և միքիչ Կատեանին մօտենալով, շնչալով ասաց.

— Խոստովանուեցէք, որ դուք փոքր ինչ վախենում էք նրանից:

— Ո՞ւմնից:

— Նրանից, — առանձնապէս շեշտելով կրիներց Արկադիին:

— Ի՞նչ դուք, — իւր կողմից հարցրեց Կատեան:

— Ես էլ, նկատեցէք, որ ասացի՝ ես էլ:

Կատեան մատը թափ տուեց նրա վրայ:

— Այդ ինձ զարմացնում է, — սկսեց Կատեան, — երբէք քոյրս աչնպէս լաւ տրամադրուած չէ եղել դէպի ձեզ, ինչպէս այժմ, անհամեմատ աւելի, քան ձեր առաջին զալստեանը:

— Հա՛.

— Միթէ՛ այդ բանը չէ՞ք նկատել, Այդ ձեզ չի ուրախացնում:

Արկադիին մտքի մէջ ընկաւ:

— Ինչո՞վ եմ արժանի դարձել Աննա Սերգէենայի բարեհաճութեան: Մի գուցէ նրանով, որ ձեր մօր նամակները բերի նրան:

— Այդ բանով էլ, ուրիշ բաներով էլ, որ ես չեմ ասիլ:

— Ինչի՞ է չասելը:

— Ձեմ ասիլ:

— Օ՛, գիտեմ, դուք շատ լամառ աղջիկ էք:

— Յամառ եմ:

— Եւ դիտող:

Կատեան աչքի պոչով Արկադիին նայեցաւ:

— Գուցէ այդ բանը ձեզ զարացնում է:

Ինչի՞ վրայ էք միտք անում:

— Ես միտք եմ անում, թէ որտեղից է ձեզ մէջ մտել այդ դիտելու ընդունակութիւնը, որը ճիշտ որ կալ ձեր մէջը: Դուք որ աղպէս վեհերկոտ էք, կասկածամիտ, ամենից խոյս տուող...

Ես շատ եմ միաշնակ ապրել. ուղես-չուղես կմտածես, Բայց միթէ՞ ես ամենքից էլ խոյս եմ տալիս:

Արկադիին երախտագիտական հալեացք ձգեց նրա վրայ:

—Այս ամենը շատ լաւ,—շարունակեց նա.—բայց ձեր կացութեան մէջ եղող մարդիկ, ուղում եմ ասել՝ ձեր կարողութիւնն ունեցող մարդիկ, քիչ է պատահում, որ ալդ շնորքըն ունենան. ձմարտութիւնը նրանց ակսնջին, որպէս և թագաւորների ականջին, դժուար է հասնում:

—Ես հարուստ չեմ հո:

Արկաղիւն դարմացաւ և Կատեալի ասածն իսկոյն չըմբռնեց. «Ճիշտ որ, ակար բոլոր կալուածքն էլ քրոջն է» մտածեց նա, ալդ միտքը նրան անհաճոյ չէր:

—Ինչքան սիրուն ասացիք,— ասաց նա:

—Ինչ կալ որ:

—Սիրուն ասացիք՝—պարզ կերպով, առանց ամաչելու և առանց պարծենալու: Ի դէպ, երեակալում եմ, որ արն մարդու զգացմունքի մէջ, որը գիտէ և ասում է, թէ ինքը աղքատ է, պէտք է որ մի առանձին, մի տեսակ սնտախառութիւն լինի:

—Քրոջս շնորհիւ ես ոչ մի ալդպիսի բան զգացած չեմ. խօսքը եկաւ, դրա համար էլ միայն լիչեցի իմ կարողութեանըս մասին:

—Լաւ. բայց խոստովանուեցէք, որ հէնց ձեր մէջն էլ մասամբ կալ արն սնտախառութիւնից, որ ալս բոլէիս լիչեցի:

—Օրինակ:

—Օրինակ, դուք հո—ներեցէք մի ալսպիսի հարց տալուս,—հարուստ մարդու չէ՞ք գնալ:

—Թէ որ նրան խիստ սիրելին լինէի... Ոչ, թւում է, թէ արն ժամանակ էլ չէի գնալ:

—Հա, տեսա՞ք:—բացականչեց Արկաղիւն և, մի քիչ լեռնոյ, աւելացրեց.—Իսկ ինչո՞ւ չէիք գնալ:

—Նրա համար, որ երգերի մէջ էլ երգում են անհաւատարութեան մասին:

—Գուցէ դուք ուղում էք իշխել կամ...

—Ոհ, ո՛չ. ինչիս է: Ընդհակառակն, ես պատրաստ եմ հնազանդուել. բայց անհաւատարութիւնը ծանր բան է. իսկ ինքդ քեզ լարգես ու հնազանդուես—եւ ալդ հասկանում եմ. դա երջանկութիւն է. բայց լուծի տակ ապրել... Ոչ, եղածն էլ հերիք է:

—Եղածն էլ հերիք է,—Կատեալի ետեից կրկնեց Արկաղիւն.—Այո, ալո, —շարունակեց նա.—իզուր չէ, որ դուք էլ

Աննա Սերդէկնայի արիւնիցն էք. դուք էլ արնպէս ինքնուրոյն էք, ինչպէս և նա: Բայց դուք անելի ծածկամիտ էք: Հաւատացած եմ, որ երբէք առաջ դուք չէք արտալատել ձեր զղացմունքը, որքան ուզում է դա խորը ու սրբազան լինի...

—Հապա թնչպէս պիտի լինէր,—հարցրեց՝ ատեան:

—Դուք խելօք էլ էք. դուք էլ նոյնպէս, եթէ ոչ անելի, կիրթ բնաւորութիւն ունիք, ինչպէս և նա...

Խնդրեմ ինձ քրոջս հետ մի համեմատէք,—շտապով ընդհատեց Կատեան Նրա խօսքը,—ալդ խիստ աննպաստ բան է ինձ համար: Ասես թէ մոռացել էք, որ քույրս Լ.գեղեցկուհի է, և խելացի, և...մանաւանդ ձեզ, Արկադիյ Նիկալալիչ, չի վալելիլ, որ աղպիսի խօսքեր ասէք, արն էլ մի ալսպիսի լուրջ դէմքով:

—Ի՛նչ է նշանակում մանաւանդ ձեզ. և ինչից էք հետեցնում, թէ կատակ է արածս:

—Իհարկէ կատակ է:

—Կարծում էք, ի՛նչ կանէի, թէ որ արն ամենին, ինչ որ ասում եմ, հաւատում լինիմ: Թէ որ իմ կարծիքովս դեռ ասածներս թուլ են:

—Ես ձեր միտքը չեմ հասկանում:

—Իրան: Դէ արժա տեսնում եմ—ուղիղ որ ձեր գիտելու ընդունակութիւնը չափազանցրել եմ:

—Ինչպէս:

Արկադիյն ոչինչ չպատասխանեց և երեսը շուռ տուեց, իսկ Կատեան կողովի մէջ մի քանի փշրանք էլ գտաւ ու ձգեց ճնճղուկների առաջ. բայց նա թէն արնպէս ուժով շարժեց, որ ճնճղուկները, առանց փշրանքները ժողովելու, թրուան գնացին:

—Կատերինա Սերդէկնա,—խօսեց լանկարծ Արկադիյն. —Ալդ ձեզ համար, հաւանօրէն, մէկ բան է. բայց գիտցած լինիք, որ ես ձեզ ոչ թէ միայն ձեր քրոջ հետ, հապա աշխարհիս երեսին ոչ ոքի հետ չեմ փոխիլ:

Նա վեր կացաւ տեղից և, կարծես իւր լեզուից թռած խօսքերից վախեցած, արադութեամբ հեռացաւ:

Իսկ Կատեան երկու ձեռքն ու կողովը ձգեց ծնկների վրայ, և զլուխը խոնարհած, երկար նայում էր Արկադիյի ետևից: Փոքր առ փոքր ալկարմիրը թեթևակի ներկեց նրա ալսերը. բայց չրթունքները չէին ժպտում, և մութ աչքերը

վարանմունք ու մի տեսակ ուրիշ, դեռ ևս անանուն զգացմունք էին արտաբերում:

—Մենա՛յ ես,—նրա կողքին լսուեց Աննա Սերգէննայի ձայնը:—Արկադիւի հետ որ չեկանք պարտէզ:

Կատեան, առանց շտապելու, անքն դարձրեց քրոջ վրայ (որ գեղանի, նույն իսկ նուրբ հագնուած, ճանապարհի վրայ կանգնած, բաց հովանոցի ծալքով Ֆիֆիի ականջն էր շարժում), և առանց շտապելու ասաց.

—Մենակ եմ:

—Ես արդ տեսնում եմ,—պատասխանեց քրորը ծիծաղելով,—ուրեմն նա իւր սենեակն է գնացել:

—Այո:

—Միասին կարդում էիք:

—Այո:

Աննա Սերգէննան բռնեց Կատեայի կղակից և նրա գէմքը բարձրացրեց:

—Հո չէ՞ք կուռել:

—Ոչ,—ասաց Կատեան և քրոջ ձեռքը կամացուկ լետ քաշեց:

—Ինչպիսի հանդիսաւոր պատասխանն ես տալիս, կարծում էի այստեղ կլինի, ուղում էի մէկտեղ զբոսնելու գնալ: Ինքն է շարունակ արդ բանն ինձնից խնդրում: Փաղաքից քեզ համար ոտնամաններ են բերել. գնա, փորձիր. դեռ երէկ նկատել էի, որ առաջուալ ոտնամաններդ բոլորովին մաշուած են: Առ հասարակ դու հարկաւոր ուշադրութիւնը չես դարձնում դրա վրայ, մինչդեռ ինչ սքանչելի ոտներ ունիս: Ձեռներդ էլ սիրուն են... միայն խոշոր են. պէտք է ուրեմն ոտներովդ գրաւես, Բայց դու պճնասէր չես:

Աննա Սերգէննան, թեթեակի շրջազգեստը խշխշացնելով, նույն ծառուղիով շարունակեց իւր ճանապարհը. Կատեան վեր կացաւ տեղից. առաւ Հայնէի հատորը և նույնպէս գնաց—բայց ոչ ոտնամանը փորձելու:

«Սքանչելի ոտներ», մտածում էր նա դանդաղ ու թեթեակերպով բարձրանալով դարաւանդի արևակէզ եղած քարէ աստիճաններով:—ասում է՝ սքանչելի ոտներ...: Դէ լաւ, ուրեմն նա արդ ոտների տակ կլինի:

Բայց նա անմիջապէս ամօթ զգաց, և շտապով վերև վազ տուեց:

Արկադիին միջանցքով իւր սենեակը գնաց. սենեկապանը հտեղիցը հասաւ և լալտնեց, թէ Բաղարովը նրա սենեակումն է։

— Եւզենիւն, — համարեա վախեցած չնչաց Արկադիին. — վաղուց է եկածը։

— Հէնց նոր շնորհ բերին, և պատուիրեցին, որ իւր դալը Աննա Սերգէննալին իմաց չտանք, հապա հրամայեցին, որ ուղղակի ձեր սենեակը բերենք։

«Ձերնի տանը դժբաղդութիւն պատահած լինի», մատնեց Արկադիին և, շտապ-շտապ աստիճաններից վեր վազելով, հապ-ճելով բաց արաւ դուռը, Բաղարովի երեսի արտալալտութիւնը խոկոյն հանգստացրեց նրան, թէպէտ եթէ մի աւելի փորձուած աչք լինէր, հաւանական է, որ ալք անախնկալ հիւրի առաջուպ նման դարձեալ եռանդուն, բաց փոքր ինչ կորացած կերպարանքի սէջ ներքին լուզմունքի նշաններ նկատէր. փոշոտած թիկնոցը հագին, զլխարկը զլխին նստած էր պատահանի մէջ. նա տեղիցը չվերկացաւ նաեւ ալնժամանակ, երբ Արկադիին աղմկալի բացականչութիւններով վրովն ընկաւ։

— Այ, քեզ անախնկալ բան։ Ո՞ր խաչից, — ասում էր նա շարունակ վեր ու վարի մէջ լինելով սենեակում՝ նման մի մարդու, որ ինքը երևակայում է, և ուրիշներին էլ ուզում է ցոյց տալ, թէ ուրախանում է։ — Տանը հո ամեն բան կարգի՞ն է, ամենքն էլ ողջ առողջ են, աչնպէս չէ։

— Ամեն բան կարգին է, բաց ամենքը առողջ չեն, — պատասխանեց Բաղարովը։ — Շատ մի բլբլացնի, ասա թող կլիս բերեն, նստիր ու լսիր, թէ ինչ եմ քեզ հաղորդելու մի քանի, բաց, վստահ եմ, բաւական զօրեղ խօսքով։

Արկադիին խաղաղեց, իսկ Բաղարովը պատմեց Պաւէլ Պետրովիչի հետ ունեցած մենամարտը։ Արկադիին շատ զարմացաւ և մինչև իսկ տխրեց, բաց հարկ չհամարեց ալք բանն արտալալտելու, նա միայն հարցրեց թէ ուղիղ հօրեղբոր վէրքը վտանգաւոր չէ և, պատասխան ստանալով, թէ վէրքը շատ հետաքրքրական է, միայն ոչ թէ բժշկական տեսակէտով, — ակամա՛յ յայտաց, մինչդեռ սիրտը ճմլուեց ու ամօթ զգաց, Բաղարովը կարծես ալք հասկացաւ։

— Հապա, եղբայր, — խօսեց նա, — ահա ինչ է նշանակում ֆեոդալների հետ ապրել, ինքդ էլ ֆեոդալ կղառնաս ու աս-

պետական մենամարտներին կմասնակցես: Ըհը, ես էլ վերկացալ ու «հալըրերի» կողմն ուղղուեցալ,—ալսպէս վերջացրեց Բաղարովը իւր խօսքը,—և ճամբին ալստեղ էլ հանդիպեցալ... որպէս զի ալս ամենը քեզ պատմեմ, կասէի ես, թէ որ անօդուտ սուտը—լիմարութիւն չհամարէի: Ոչ, իմ ալստեղ հանդիպելս—ինքս էլ չգիտեմ ինչ բանի համար է: Գիտես, օգտակար է, որ մարդ երբեմն իւր քաքուլից բռնի ու ձիգ տալ, տեղիցը արմատահան անի, ակ, ինչպէս բողկն են անում. ես ալդ բանն ինձ արի ալն օրերս...: Բալց սիրտս ուղեց մի անգամ էլ մտիկ տալ ալն բանին, որից ես ձեռք եմ քաշել, ալն թըմքին, ուր ես տնկուած էի:

—Յուսում թէ ալդ խօսքերն ինձ չեն վերաբերում,—լուզուած պատասխանեց Արկադիին,—լուս ունիմ, որ մտադիր չես ինձանից բաժանուելու:

Բաղարովն աչքը սեւեռեց նրա վրալ:

—Որպէս թէ շատ ես վշտանալու Էլի, ինձ թուում է, թէ դու արդէն իսկ հեռացած ես ինձանից: Խիստ զուարթ ու մաքուր ես... երեւի Աննա Սերգէնայի հետ բանդ լաւ է զնում:

—Ես ինչ բան ունիմ Աննա Սերգէնայի հետ:

—Նրա խաթրին չէր քու ալստեղ գալդ, աղանեակ, ի դէպ, ինչպէս է անտեղ կիրակնօրեալ զպորոցների բանը, միթէ դու սիրահարուած չես Աննա Սերգէնային: Ձլինի արդէն խօհեմութեան շրջանդ ես մտել:

—Եւդենիլ, գիտես, որ միշտ անկեղծ եմ եղել քեզ հետ. կարող եմ հաւատացնել, երդում եմ, որ սխալում ես:

—Հմ. նոր խօսք,—ցած ձայնով նկատեց Բաղարովը:—Բալց մի տաքանալ ինձ համար ալդ հո ամենակին նշանակութիւն չունի: Ռոմանտիկ մարդ որ լինէր, ալսպէս կ'ասէր՝—զգում եմ, որ մեր ճանապարհները սկսում են բաժանուել. իսկ ես ուղղակի կ'ասեմ, որ մենք միմեանցից լափրացել ենք:

—Եւդենիլ...

—Հոգի ջան, ալդ վնաս չունի. կեանքում դեռ ինչքան բաներից ենք լափրանում: Իսկ ալժմ, ինձ թուում է, որ աւելի լաւ է մնաս բարով ասենք միմեանց: Այն ժամանակուանից, որ ալստեղ եմ, ես շատ վատ եմ զգում ինձ, հէնց իմանալով, որ ինչուս լցուած լինի ալն նամակով, որ Գոգուրը գրել է Կալուգայի նահանգապետի կնոջը, ի դէպ, չեմ ասել, որ ձիանը լեռանն:

—Ի՞նչ ես ասում, Եղեմի, աղ անկարելի բան է։

—Ինչո՞ւ։

—Էլ իմ մասին ասելն աւելորդ է. բայց Աննա Սերգէ-  
նայի վերաբերմամբ արածդ մեծ անքաղաքավարութիւն կլի-  
նի. նա անպատճառ կուզենալ քեզ տեսնել։

—Է՛, աղտեղ դու սխալւում ես։

—Իսկ ես, ընդհակառակն, հաւատացած եմ, որ ասածս ու-  
ղիղ է,—պատասխանեց Արկադիին։—Եւ ինչու ես կեղծում։ Բա-  
նըն որ աղտեղ հասաւ, հէնց ինքդ, նրա համար չես այտեղ  
եկել։

—Աղ դուցէ և ուղիղ է, բայց և այնպէս սխալւում ես։

Բայց Արկադիի տասձն ուղիղ էր. Աննա Սերգէնայն  
ուղեց Բազարովին տեսնել և սենեկապանի միջոցով նրան իւր  
սենեակը հրաւիրեց. Բազարովը, նրա մօտ գնալուց առաջ շո-  
րերը փոխեց. բանից երևաց, որ նա իւր շորերն այնպէս էր  
դարձել, որ նոր զգեստի հանելը հեշտ լինի։

Օդինցեան նրան ընդունեց ոչ թէ այն սենեակում, ուր  
որ նա այնպէս անակնկալ կերպով իւր սէրն էր լստնել,  
հասցաւ ընդունարանում։ Նա սիրալիր կերպով մատի ծալքերը  
մեկնեց Բազարովին, իսկ դէմքն ակամայ լարուած դրութիւն  
էր արտաբայում։

—Աննա Սերգէնայ,—շտապեց ասելու Բազարովը,—նախ  
և առաջ պէտք է ձեզ հանգստացնեմ. Զեր առաջը դռնում է  
մի մահկանացու, որ վաղուց արդէն խելքի է եկել և լոյս ու-  
նի, որ ուրիշներն էլ մոռացած կլինեն, նրա լիմարութիւննե-  
րը։ Ես հեռանում եմ երկար ժամանակով, և համաձայնեցէք,  
որ թէպէտ և մի շատ էլ քընքուշ էակ չեմ, բայց ինձ համար  
ուրախալի չէր լինիլ հեռանալ այտեղից և մտածել, թէ դուք  
զգուանքով էք լիշու՞մ ինձ։

Աննա Սերգէնայն խորը շունչ քաշեց նման այն մար-  
դուն, որ հէնց նոր է բարձր լեռ բարձրացել, և ժպիտը կեն-  
դանացրեց նրա դէմքը։ Նա ձեռքը կրկին մեկնեց Բազարովին,  
և փոխադարձաբար սեղմեց նրա ձեռքը։

—Անցուկը մոռցուկ է,—ասաց նա,—մանաւանդ որ, խըղ-  
ճով որ ասենք, այն ժամանակ ես էլ մեղանչեցի եթէ ոչ իմ  
ձեռքնեղունիւթս, գոնէ մի ուրիշ բանով։ Մէկ խօսք՝ առաջուկ  
նման բարեկամ լինի՞նք, Դա երազ էր միայն—այնպէս չէ, իսկ  
ձի է երազները միտքը պահում։

—Ո՛վ է միտքը պահում։ Մանաւանդ որ էերը...սարքովի զգացմունք է։

—Իրան, ինձ համար շատ հաճելի է մի աղպիսի բան լսելը։ Այսպէս էր խօսում Աննա Սերգէննան, ալսպէս էր խօսում և Բաղարովը. երկուսն էլ կարծում էին, թէ ճշմարտոն են ասում։ Արդեօք ճշմարտութիւն, կատարեալ ճշմարտութիւն կան նրանց խօսքերի մէջ։ Նրանք իրանք էլ չգիտէին այդ, ուր մնաց հեղինակը։ Բայց ալն ձևով էին խօսում, որ ասես թէ կատարելապէս իրար հաւատալիս լինէին։

Աննա Սերգէննան, ի միջի ալլոց, Բաղարովին հարցրեց, թէ քնչ էր անում կերսանովների աւանդ։ Քիչ էր մնում Բաղարովը նրան պատմէր Պաւէլ Պետրովիչի հետ ունեցած մեղամարտը, բայց զսպեց իրեն մտածելով, թէ մի գուցէ նա կարծէ, թէ ուղում է իւր անձը հետաքրքրական դարձնել, և պատասխանեց, թէ ալս բոլոր միջոցին աշխատելիս է եղել։

—Իսկ ես,—խօսեց Աննա Սերգէննան,—սկզբում Աստուած դիտէ ինչու, թախիծը պաշարել էր ինձ, մինչև անգամ մտածում էի արտասահման գնալ, երևակայեցէք...Յետոյ այդ անցաւ. ձեր բարեկամը, Արկադիւ Նիկալալիչը, եկաւ, ու ես նորից իմ ճամբաս գտալ, նորից իմ դերս ձեռք առի։

—Այդ քնչ դեր է, կարելի է իմանալ։

—Մօրաքորոյ, դաստիարակչուհու, մօր, ինչ անուն ուղում էք տուէք։ Ի դէպ. գիտէք, առաջ լաւ չէի հասկանում Արկադիւ Նիկալալիչի հետ ձեր ունեցած սերտ բարեկամութիւնը. նրան բաւական աննշան ոք էի համարում։ Բայց այժմ աւելի լաւ ճանաչեցի, և համոզուեցալ, որ նա խելօք է...Իսկ զլիաւորը նա երիտասարդ է, երիտասարդ...չէ թէ մեզ նման, Եւգենիւ Վասիլիւի։

—Նա դարձեալ ձեր ներկայութեանը քաշում է,—հարցրեց Բաղարովը։

—Միթէ...,—սկսեց Աննա Սերգէննան և, մի քիչ անեւոց լեռնոյ, աւելացրեց.—այժմ աւելի է վստահանում ինձ, հետըս խօսում է։ Առաջ իձանից խոյս էր տալիս։ Ասենք ես էլ մի շատ նրա ընկերութիւնը չէի որոնում։ Նա ու կատեան այժմ մտերիմ բարեկամներ են։

Բաղարովի սիրտը նեղացաւ. «Ինչ ասածդ չը կարող խորամանկութիւն չբանեցներ», մտածեց նա։

—Ասում էք ձեզանից խոյս էր տալիս,—սառը ծաղրով

արտասանեց Բաղարովը,—բայց, երևի, ձեզանից անլալտ չէ, որ նա ձեզ սիրահարուած էր:

—Ի՞նչ, նա էլ,—գուրս թռաւ Աննա Սերգէննալի շըրթունքներէց:

—Նա էլ,—խոնարհ գլուխ տալով կրկնեց Բաղարովը,—Մ/ԹՔ ալդ չգիտէիք և իմ հաղորդածը նորութիւն էր ձեզ համար:

Աննա Սերգէննան աչքերը ցած ձգեց:

—Սխալուում էք, Սեգենիլ վասիլեհի:

—Չեմ կարծում: Բայց, գուցէ ինձ չէր վախելի, որ ալդ մասին լինեմ: Ելլ խորամանկութիւն չանես, աւելացրեց նա ինքն իրեն:

—Ինչո՞ւ չգիտի լինէք որ: Բայց կարծում եմ, որ դուք այստեղ էլ բոլորական տպաւորութեանը խիստ մեծ նշանակութիւն էք տալիս: Սկսում եմ կասկածել, որ չափազանցութիւն անելու տրամադրութիւն ունիք:

—Աւելի լաւ է ալդ մասին չխօսենք, Աննա Սերգէննա:

—Ինչո՞ւ չխօսել,—պատասխանեց տիկինը և խօսքը ուրիշ բանի վրայ դարձրեց: Բայց և աշնպէս Բաղարովի ներկայութեանը նա իրեն անլարմար գրութեան մէջ էր զգում, թէպէտ և նրան էլ ասաց, և ինքն իրեն էլ հաւատացրեց, թէ ամեն ինչ մոռացութեան է տրուած: Բաղարովի հետ ամենահասարակ խօսքեր փոխանակելիս, նոյն իսկ հետը կատակ անելիս, նա երկիւղի ինքն ճնշումն էր զգում: Ալդպէս ահա մարդիկ շոգենաւի մէջ, ծովի վրայ, անհոգ կերպով խօսում են, ծիծաղում, հէնց իմանաւ ցամաք հողի վրայ լինին գտնուելիս: Բայց հերիք է մի աննշան արգելք հանդիպի, մի անսովոր բանի մի ամենաշնչին նշան երևի, անմիջապէս ամենքի երեսներին էլ կ'ընալ առանձին լուզման արտալալտութիւն, որ վկայ է նրանց մշտական վտանգի մշտական գիտակցութեան:

Աննա Սերգէննալի խօսակցութիւնը Բաղարովի հետ՝ երկար չքաշեց: Նա սկսաւ մտքերի մէջ ընկնել, անուշադիր պատասխաններ տալ և վերջ ի վերջոյ առաջարկեց դահլիճ գնալ, ուր գտնուում էին իշխանուհին ու Լատեան: Էջապա Արկադիի Նիկալալիչն ուր է՞ հարցրեց տանտիկինը և, իմանալով, որ ժամից աւելի է, որ չի երեացել, ետևիցը մարդ ուղարկեց: Արկադիին շուտով չգտան՝ նա պարտիզի ամենախուլ անկիւնը քաշուած, և կզակը իրար խաչած ձեռներին լինած, նստել էր մտքերի մէջ թաղուած: Խոր և նշանաւոր էին ալդ մտքերը,

բայց ոչ տխուր: Նա գիտէր, որ Աննա Սերգէննան մենակ նստած է Բաղարովի հետ բալց, առաջուպէս նման, նախանձ չէր տածում: Ընդհակառակն, նրա դէմքը հանդարտիկ պարզւում էր: ասես թէ նա և՛ դարմանում էր մի բանի, և, ուրախանում, և վճռում էր մի բան անելու:

## XXVI

Հանգուցեալ Օդինցեր նորամուծութիւններ չէր սիրում, բայց սիրում էր չորոշ չափով ազնուացած ճաշակի փոփոխութիւնը, և այդ իսկ պատճառով էլ իւր պարտիզում, ջերմանոցի ու լճակի միջև, ռուսական աղիւսից շինել էր տուել լուսական սրահիկի նման մի բան: Այդ սրահիկի ետեի պատի մէջ շինել էր տուել վեց հատ փոս ընկած (ղոլաբի պէս) տեղեր՝ արձանների համար, որ ուղղում էր արտասահմանից բերել տալ: Այդ արձանները պէտք է ներկայացնէին— Առանձնութիւն, Լուսութիւն, Մտածութիւն, Մեղամաղձութիւն, Ամօթխածութիւն և Զգացողութիւն: Արձաններից մէկը, Լուսութեան աստուածուհին, մատը բերանին, բերել ու զրել էին իւր տեղը, բայց հէնց նոյն օրը ընդոթինների երեխաները կոտորել էին քիթը, և թէպէտ հարևան գալթաղը խոստացել էր, որ ինքն արձանի քիթը առաջուանից երկու անգամ աւելի լաւ կշինի, բայց և այնպէս Օդինցեր հրամայել էր արձանը վերցնել, որը և ձգել էին ծածկած կալի մի անկեանը, ուր երկար տարիներ մնացել էր՝ կանանց մէջ սնոտի-ապաշտական սարսափ առաջացնելով: Սրահիկի առջևի մասը վաղուց ծածկուել էր խիտ բուսած թփերով և համատարած կանաչի մէջ միայն սիւների խոփակներն էին երևում: Սրահիկի մէջ նոյն իսկ կէս օրուալ շոգին զով էր լինում: Աննա Սերգէննան ալն օրից, որ ալստեղ մի լորտու էր տեսել, չէր սիրում ալդտեղ դալ: Բայց Կատեան լաճախ գալիս էր նըստում մի մեծ քարի նստարանի վրայ, որ շինած էր դոլաբներից մէկի ներքեւ: Թարմութեամբ ու ստուերով շրջապատուած, նա կարդում էր, գործում, կամ անձնատուր լինում ալն կատարեալ լուսութեան զգացողութեան, որը, հաւանօրէն, լալտնի է ամենքին էլ, և որի հրապուրն է կազմում ալն զրութիւնը, երբ մենք հազիւ գիտակցելով, լռիկ ունկն-

դիր ենք լինում կենսական լալն ալիքին, որ շարունակ հասան է տալիս թէ մեր շուրջը և թէ հենց մեր մէջը:

Բաղարովի գալու լաջորդ օրը կատեան նստած էր իւր սիրած նստարանի վրա, և նրա կողքին դարձեալ Արկադիին էր նստած: Ինքն էր խնդրել, որ կատեան իրա հետը սրահիկ գալ:

Նախաճաշիկի դեռ մէկ ժամի չափ ժամանակ կար. ցողապատ առաւօտն արդէն տեղի էր տալիս տաք օրուան: Արկադիի դէմքը դեռ երէկուալ արտալատութիւնն էր պահել, կատեան հոգսալից կերպարանք ունէր: Քոյրը, թէլից անմիջապէս լետով, նրան կանչել էր իւր առանձնասենեակը և, նախապէս գուրգուրելով նրան, մի բան որ միշտ մի փոքր վախեցնում էր կատեանի աչքը, խորհուրդ էր տուել, որ զգուշ լինի Արկադիի հետ, մանաւանդ խոլս տալ նրա հետ առանձնացած զրոյց անելուց, որը իբր թէ արդէն մօրաքօրն էլ տան մէջ բոլոր եղողներն էլ նկատել են: Բացի ալդ, դեռ նախորդ երեկոյեան Աննա Սերգէննաւի տրամադրութիւնը լաւ չէր: Հենց ինքն կատեան էլ շփոթածի պէս էր, ասես թէ իրեն մեղաւոր զգալիս լինէր: Արկադիի խնդրքին զիջանելով նա ինքն իրեն խօսք տուաւ, որ սա վերջինը կլինի:

— Կատերինա Սերգէննա, — սկսեց Արկադիին մի տեսակ վեհերկոտ համարձակութեամբ, — ալն օրուանից, որ ես պատիւ ունիմ ձեզ հետ միևնոյն լարկի տակ ապրել, ու շատ բանի մասին խօսել եմ ձեզ հետ, մինչդեռ կալ ինձ համար մի շատ կարևոր... խնդիր, որ դեռ ես չեմ շօշափել: Դուք երէկ ասացիք, որ ալստեղ ինձ փոխեցին, — աւելացրեց նա, միաժամանակ թէ՛ դիտելով և թէ խոլս տալով իւր վրալ ուղղուած կատեանի հարցական հալեացքից: — Արդարեւ, ես շատ բանի մէջ փոխուած եմ, և ալդ դուք ամենքից լաւ գիտէք: — դուք, որին որ ես, իսկապէս, պարտական եմ իմ ալդ կրած փոփոխութիւնս:

— Ե... Ի... — ասաց կատեան:

— Ես ալ ևս ալն անբարտաւան, կռուասէր երեխան չեմ, ինչպէս որ էի ալս տեղ գալիս, — շարունակեց Արկադիին, — Ի զուր հո չեմ քսաներեքս անցկացրել. առաջուալ պէս դարձեալ ուղղում եմ լինել օգտակար, բոլոր ոլթերս նուիրել ճշմարտութեան. բաց ալ ևս իմ իղէալներս ալնտեղ չեմ որոնում, ուր առաջ էի որոնում. դրանք ինձ... աւելի մօտիկում:

են երևում: Մինչև ավժամ ես ինձ չէի հասկանում, ինձ արն-  
պիսի նպատակներ էր դնում, որ իմ ուժիցս վեր են...: Մո-  
տերքս, մի զղացմունքի շնորհիւ, իմ աչքերս բացուեցան...:  
Խօսածս շատ պարզ չէ, բայց լուս ունեմ, որ միտքս կհաս-  
կանաք...:

Կատեան ոչինչ չէր պատասխանում, բայց Արկադիին  
նայելուց դադարեց:

—Կարծում եմ,—նորից խօսեց նա արդէն աւելի լու-  
ղուած ձայնով. մինչ խալտիտը նրա վերեւ, կէշու սաղարթի  
մէջ անհոգ իւր երգն էր երգում,—կարծում եմ, որ ամեն մի  
ազնիւ մարդու պարտաւորութիւնն է բոլորովին անկեղծ լի-  
նել արն... արն մարդկանց հետ, որոնք... մի խօսքով իրեն  
մօտիկ անձերի հետ, ուստի և ես... ես մտադիր եմ...

Բայց արտիղ Արկադիի ճշգրտաբանութիւնը կտրուեց.  
նա շփոթուել, կմկմաց և ստիպուեցաւ մի փոքր կանդ առ-  
նել. Կատեան դեռ էլի աչքը վերեւ չէր բարձրացնում: Քուլում  
էր, թէ նա չէր էլ հասկանում, թէ ինչ էր սրա վերջը, և մի  
բանի էր սպասում:

—Ես դռնակում եմ, որ ձեզ պիտի զարմացնեմ,—սկսեց  
Արկադիին նորից ուժերը հաւաքելով, —մանաւանդ որ արդ  
զգացմունքը մասամբ... մասամբ, նկատեցէք, վերաբերում է  
ձեզ: Որքան լիշում եմ, երէկ ինձ կշտամբում էիք, թէ լըբ-  
ջութիւնը պակաս է մէջս,—շարունակեց Արկադիին. մի արն-  
պիսի մարդու պէս, որը ճանճի մէջ մտած, զգում է, որ ամեն  
մի քալափոխին աւելի ու աւելի խրուում է խորը, բայց և  
արնպէս առաջ է շտապում լուսալով, թէ շուտով կաղատուի:  
—Այդ կշտամբանքը լաճախ ուղղուած է լինում... ընկնում է  
երիտասարդների գլխին մինչև իսկ ան ժամանակ, երբ որ  
ներանք դադարում են կշտամբանքի արժանի լինելուց, իսկ  
եթէ իմ մէջս աւելի ամբարտաւանութիւն կար... (Դէ օգնիր  
ինձ, օգնիր է լուսհատաբար մտածում էր Արկադիին, բայց  
Կատեան առաջուայ պէս գլուխը չէր շարժում): Եթէ կարո-  
ղանալի լուսալ...:

—Եթէ կարողանալի հաւատացած լինել ձեր ասածին,—  
այդ ընդէին լռուեց Աննա Սերգէենայի պարզ ձայնը:

Արկադիին իսկոյն լռեց, իսկ Կատեան գոյնը գցեց: Ու-  
ղիղ սրահիկը ծածկող թփերի կողքից ճանապարհ էր անց-  
նում: Աննա Սերգէենան Բազարովի հետ այդ ճանապարհով

էր գնում: Կատեան ու Արկադիին նրանց չէին տեսնում, բայց նրանց ամեն մի խօսքը, շրջազգեստի խշխշոցը, նոյն իսկ շնչառութիւնը լսում էին, Խօսողները մի քանի քալէ առին և հակառակի պէս կանգ առան ուղղակի սրահիկի դիմացը:

—Տեսաք,—շարունակեց Աննա Սերգէնէան,—որ երկուսս էլ սխալուեցանք. երկուսս էլ խիստ ջանել չենք, սա՛նաւանդ ես. մենք արդէն կեանք ենք ունեցել, լոգնել ենք, երկուսս էլ—ի՛նչ կալ թաղցնելու—խելօք ենք,—սկզբում մենք շահագրգռուեցանք միմեանցով, իրար մէջ հետաքրքրութիւն շարժեցինք... իսկ լետու...

—Իսկ լետու ես անպէտք դարձալ,—վրալ բերեց Բազարովը:

—Ինքներդ էլ գիտէք, որ մեր տարածաշնութեան պատճառն ալդ չէր: Ի՛նչ որ է՝ մենք միմեանց պէտք չունէինք. ահա գլխաւոր պատճառը. մեր մէջ խիստ չառ... ինչպէս ասեմ... համեմատն բան կար: Մենք ան գլխից չհասկացանք ալդ: Մինչդեռ Արկադիին...

—Դուք պէտք ունիք նրան,—հարցրեց Բազարովը:

—Հերիք է, Եղեկիւ Վատիլիիչ: Ասում էք, թէ նա սիրում է ինձ, և ինձ էլ միշտ արնայէս է թուացել, թէ նրան դիւր եմ գալիս: Գիտեմ, որ ես նրա մօրաքրոջ տեղը կըռնեմ, բայց չեմ ուզում ձեզանից ծածուկ պահել, որ սկսել եմ նրա մասին աւելի լաճախ միտք անել: Մի առանձին վայելչութիւն կալ ալդ նորաստի և թարմ զգացմունքի մէջ...

—Աղպիսի դէպքերում խօսքն աւելի գործածական է,—ընդհատեց Բազարովը. նրա հանդարտ, բայց խուլ ձայնից զգացում էր, որ մաղձը խառնուել է նրա մէջ.—Երէկ Արկադիին ինչ որ գաղտնապահ էր դարձել և հետո խօսելիս՝ ոչ ձեր մասին խօսեց, ոչ էլ ձեր քրոջ... Այս նշանաւոր բան է:

—Նա Կատեայի հետ բոլորովին եղբօր պէս է,—խօսեց Աննա Սերգէնէան,—և, ես նրա ալդ բանը հաւանում եմ, թէպէտ, գուցէ և հարկաւոր չէր թոյլ տալի, որ նրանք ալդքան մտերմանային:

—Ձեր մէջ խօսողը—ձեր ալդ քոյր լինելու զգացմունքն է,—երկարացնելով ասաց Բազարովը:

—Ի հարկէ... բայց ինչո՞ւ ենք կանգնել: Գնանք: Ի՛նչ տաքօրինակ խօսակցութիւն է սա, արնայէս չէ: Կարծող էի

սպասել, որ այսպիսի խօսակցութիւն պէտք ունենամ ձեզ հետ: Դիտէ՛ք, որ ձեզանից վախենում եմ... և միևնույն ժամանակ վստահանում եմ ձեզ, որովհետև իսկապէս դուք շատ բարի՞ւէք:

—Նախ որ ես ամենին բարի չեմ. իսկ երկրորդ էլ որ ես ձեր առաջ ընդրո՞ւ նշանակութիւնս կորցրել եմ, և դուք ինձ աւսում էք, թէ ես բարի եմ... Այդ միևնույն է, թէ մեռելի զլխին ծաղկեալ պսակ դնես:

—Եւգենիյ Վասիլիչ, մեր ձեռին չէ...—սկսել էր Աննա Սերգէեանան. բայց քամին փչեց, տերեւները խշաղցրեց, և առաւ, տարաւ նրա խօսքերը:

—Դուք հո ազատ էք,—ասաց Բաղարովը մի քիչ լեռուով:—Ուրիշ ոչ մի խօսք կարելի չէր որոշել. քալերը հեռացան... ամեն ինչ լռեց:

Արկաղիլին շուռ եկաւ Կատեալի կողմը. Կատեան հէնց նոյն տեղն էլ նստած էր, միայն գլուխը աւելի քաշ էր գցել:

Կատերինա Սերգէեանա,—խօսեց Արկաղիլին դողդոջուն ձայնով և ձեռները հուպ տուած.—լաւիտեան և անդարձ սիրում եմ ձեզ, և բացի ձեզանից ոչ ոքի չեմ սիրում: Ուզում էի ձեզ այս բանն ասել, ձեր կայծիքն իմանալ և խնդրել ձեր ձեռքը, որովհետև ես թէ հարուստ չեմ և թէ զգում եմ, որ պատրաստ եմ ամէն տեսակ զոհաբերութիւն անելու... Չէք պատասխանում: Չէք հաւատում: Կարծում էք թեթեամտօրէն է ասածս: Բայց լիշեցէք այս վերջին օրերս: Մի՞թէ վաղուց ի վեր չհամոզուեցաք, թէ ուրիշ ամեն բան—լաւ իմացէք—ամեն, ուրիշ ամեն բան վաղուց արդէն անհետ հեռացել է: Նախեցէք ինձ, մի բառ ասացէք ինձ... Ես, ես ձեզ սիրում եմ,—հաւատացէք խօսքիս:

Կատեան ծանրախոհ և պայծառ հալեացքով մտիկ տուաւ Արկաղիլին և, երկար խորհելուց լետով, հաղիւ ժպտալով, ասաց՝—Այո:

Արկաղիլին նստած տեղից վեր թռաւ:

—Այո, Դուք «այո» ասացիք, Կատերինա Սերգէեանա: Ի՞նչ է նշանակում այդ խօսքը: Այո, թէ ես ձեզ սիրում եմ և դուք հաւատում էք ինձ... Թէ... Թէ... չեմ համարձակում աւարտել...:

—Այո,—կրկնեց Կատեան, և այս անգամ Արկաղիլին

Նրա միտքը հասկացաւ: Նա խլեց նրա խոշոր, գեղեցիկ ձեռքերը և, ոգևորութիւնից շունչը բռնուած, արտին սեղմեց: Նա հաղիւ էր կարողանում ոտքի վրայ կենալ և շարունակ կրկնում էր: Վատեա, կատեա...», իսկ կատեան մի տեսակ անմեղաբար լաց եղաւ՝ ինքն էլ իւր արցունքների վրայ ծածաղեկով: Ով որ իւր սիրած էակի աչքին չէ տեսել ալիպիսի արտասուք, նա դեռ չէ զգացել, թէ որ աստիճան մարդս կարող է, ամբողջովին երախտագիտութիւնից ու ամօթից մաքած, երջանիկ լինել աշխարքիս մէջ:

Միւս օրը առաւօտեան վաղ Աննա Սերգէնեան հրամայեց, որ Բաղարովին կանչեն իւր առանձնասենեակը, և, ապամայ փայտը երեսին, նրան տուեց մի ծալած նամակի թուղթ: Այդ Արկաղիի նամակն էր, դրանով Արկաղիին կատեալի ձեռքն էր խնդրում:

Բաղարովը շուտով կարդաց նամակը, և իւր վրայ ուժ բանեցրեց, որպէս զի չարտալատէ արն չարախնդիւ զգացմունքը, որ վարկենապէս բորբոքուեցաւ նրա կրծքում:

—Այսպէս հա,—ասաց նա,—իսկ դուք, կարծեմ, զեռ երէկ կարծում էիք, թէ նա եղբարական սիրով է սիրում կատերինա Սերգէնային: Այժմ թնչ էք մտադիր անելու:

—Դժժ է ինչ խորհուրդ կտաք,—հարցրեց Աննա Սերգէնեան, շարունակելով ծիծաղել:

—Կարծում եմ,—պատասխանեց Բաղարովը նմանապէս ծիծաղելով, թէպէտ և, Աննա Սերգէնայի նման, ամենեին ոչ ուրախ էր և ոչ էլ ծիծաղն էր գալիս,—կարծում եմ, որ պէտք է երիտասարդներին օրհնել: Ամենայն կողմից լաջող ամուսին է. կիրսանովը լաւ կարողութիւն ունի, հօր մինուճար զաւակն է, և հայրն էլ լաւ մարդ է, չի ընդդիմանալ:

Օգիցեցեան սենեակի մէջ ետ ու առաջ ման եկաւ: Նրա գէմքը փոփոխաբար մէկ կարմրում էր, մէկ՝ դեղնում:

—Կարծեմ էք,—ասաց նա:—Ի՞նչ կալ որ. ես արգելք չեմ տեսնում...: Ուրախ եմ կատեալի համար... և Արկաղիի Նիկալայիչի համար: Ի հարկէ, կսպասեմ հօր պատասխանին: Հենց իրեն կողարկեմ հօրը մօտ: Ահաւասիկ բանից երևաց, որ ես իրաւացի էի, երբ երէկ ասում էի, թէ մենք երկուսս էլ արդէն ծերացել ենք...: Ինչպէս է, որ ոչինչ չեմ նկատել: Զարմանում եմ:

Աննա Սերգէնեան նորից ծիծաղեց, և ածմիջապէս շուռ եկաւ:

—Ալժմուայ երիտասարդները չմտ խորամանկ են դարձել,—նկատեց Բաղարովը և նոյնպէս ծիծաղեցաւ:—Մնաք բարով,—խօսեց նա դարձեալ, կարճ լուսթիւնից լետով:—Կը ցանկամ, որ ամենահաճելի կերպով աւարտէք այդ գործը. իսկ ես հեռուից կուրախանամ:

Օդինցեան շտապով դարձաւ նրա կողմը:

—Միթէ գնում էք: Ինչո՞ւ ալժմա չմնաք՝ որ: Մնացէք... ձեր հետ զրոյց անելը զուարճալի է... հէնց դիտենաս անդունդի ափովը ես ման դալիս: Սկզբում վախվիտում ես, բայց լետով վրագ քաջութիւն է գալիս: Մնացէք:

—Շնորհակալ եմ ձեր առաջարկութեան համար, Աննա Սերգէնեայ, նոյնպէս և իմ զրոյց անելու տաղանդիս վրա՛ ունեցածդ լաւ համարման համար: Բայց իմ հասկացողութեամբս ես արդէն իսկ չափազանց երկար մնացի ինձ օտար մթնոլորդի մէջ, Թռչող ձկնե՛րը մի առ ժամանակ կարող են մնալ օդի մէջ, բայց շուտով պէտք է չլմփան ջրի մէջ. Թող տուէք ես էլ իմ մթնոլորդիս մէջ ընկնեմ:

Օդինցեան մտիկ տուաւ Բաղարովի: Ռաւն ժպիտը ծռմռել էր Բաղարովի դէմքը: «Սա ինձ սիրում է» մտածեց Օդինցեան—և Բաղարովը նրա ափսոսը եկաւ, և կարեկցաբար ձեռքը մեկնեց նրան:

Սակաւն Բաղարովը էլ հասկացաւ Աննա Սերգէնեայի մտածմունքը:

—Ոչ,—ասաց նա և մի քալ լետ քաշուեցաւ:—Թէպէտ ես աղքատ մարդ եմ, բայց դեռ մինչև ալժմ ողորմութիւն չեմ ընդունել: Մնաք բարով, և առողջ լինիք:

—Համոզուած եմ որ սա վերջին տեսնուածներս չիլիւնի,—ասաց Աննա Սերգէնեան ակամալ շարժում անելով:

—Աշխարհիս երեսին թնչ ասես չի պատահիլ,—ասաց Բաղարովը, գլուխ տուեց և դուրս եկաւ:

—Ուրեմն որոշել ես տուն-տեղ լինել, Էլի,—ասում էր նա նոյն օրը Արկադիլին՝ կկուզ նստած՝ իրերը ճամբրուկի մէջ տեղաւորելով:—Վնաս չունի. լաւ բան է: Բայց իզուր էիր աշխատում ինձանից ծածկել: Նս քեզանից բոլորովին ուրիշ բան էի սպասում: Կամ, չիլիւնի այդ բանը քեզ էլ է չլկացրել:

—Ուղիղ է, քեզանից բաժանուելիս ես այս բանը չէի

սպասում,—պատասխանեց Արկադիին,—բայց ինչու ես ինքդ էլ խաբում ասելով՝ սլաւ բան էո, կարծես թէ չգիտեմ, թէ դու ինչ կարծիք ունիս ամուսնութեան վրայ:

—Էհ, սիրելի բարեկամ,—ասաց Բազարովը.—ալդ ինչ տեսակ ես խօսում: Հո տեսնում ես ինչ եմ անում.—ճամբրուկիս մէջ դատարկ տեղ է մնացել և ես ալդ տեղը խոտով եմ լցնում. ալդպէս նա և մեր կեանքի ճամբրուկը.—ինչով ուզում ես լցու, միայն դատարկ չմնալ: Խնդրում եմ, մի նեղանալ. հաւանօրէն լիշելիս կլինես, թէ ի՞նչ կարծիք ունէի Կատերինա Սերգէենայի վրայ: Ազնկերանց մէջ ոմանք խելօքի անուն ունին միմիայն նրա համար, որ խելացի կերպով հառաչել գիտեն. բայց քոնը իր գլուխը կպահի, և այնպէս կպահի, որ քեզ էլ իւր ձեռներին մէջ կհաւաքի,—էհ, ալդ ալդպէս էլ հարկաւոր էր.—Նա խուփը ծածկեց ու լատակի վրայից վեր կացաւ.—Իսկ այժմ միաս բաւելի միջոցիս կրկնում եմ... որովհետեւ խաբելու բան չկալ,—մենք առ միշտ բաժանում ենք միմեանցից, և դու էլ ես զգում ալդ... Խելօք բան ես անում, դու մեր դասն, անհամ, լարկազուրկ կեանքի համար չես ստեղծուած: Փու մէջդ ոչ լանդզնութիւն ունիս, ոչ չարութիւն, հապա ունիս միայն երիտասարդական համարձակութիւն ու երիտասարդական խիղախութիւն. ալդ մեր դործին չի գալ: Դուք, ազնուականներդ աղնիւ հեղութիւնից կամ աղնիւ բորբոքումից դէնը չէք անցնիլ, իսկ ալդ դատարկ բան է: Դուք, օրինակ, չէք կուում, բայց արդէն ձեզ կտրիճ էք կարծում:

—Իսկ մենք կուուել ենք ուզում: Էհ, Մեր փոշին՝ քու աչքերդ կ'կուրացնի, մեր ցեխը քեզ կկեղտոտի, դու նոյն իսկ մեր բարձրութեանը չես էլ հասել. դու ակամայ զուարճանում ես քեզանով, ինքդ քեզ հախոյելը քեզ հաճութ է պատճառում. իսկ մեզ համար ալդ բանը տաղտկալի է—մի ուրիշ բան է հարկաւոր, մենք պէտք է ուրիշներին կոտրենք: Դու պատուական երիտասարդ ես. բայց և այնպէս թրջուած, ազատամիտ աղա ես—է վո՛ւատ ու (այսքան միայն), ինչպէս ասում է իմ հայրս:

—Առ միշտ ես բաժանում ինձանից, Եւգենիւ, տխուր կերպով ասաց Արկադիին,—և ինձ ասելու ուրիշ խօսք չունիս: Բազարովը ծործորակը քորեց:

—Ունիմ, Արկադիւ, ունիմ. ուրիշ խօսքեր էլ ունիմ ա-

սեղու, բայց չեմ ասի. ալդ ուսմանտիղմ կլինի. ալդ նշանա-  
կում է—բոլորովին մեղկանալ: Բայց դու շուտով ամուսնա-  
ցիր, ու քեզ համար բուն դիր, ու շատ զաւակներ հասցրու:  
Նրանք խելքը զլսին մարդիկ կլինին արդէն նրանով, որ  
խկը ժամանակին ծնուած կլինին, և ոչ թէ մեզ նման ժա-  
մանակից առաջ: Ըհը, տեսնում եմ ձիերը պատրաստ են:  
Ժամանակ է: Ամենքին մնաք բարով արեւ եմ... Հը, համ-  
բուրունք, ինչ է:

Արկադիլն ընկաւ իւր նախկին դաստիարակչի և ընկե-  
րով վզովն ու արտասուենքները դուրս ցատեցին նրա աչ-  
քերից:

—Ի՛նչ ասել է երիտասարդութիւն, —հանդարտ կերպով  
արտասանեց Բազարովը:—Բայց ես կատերինա Սերգէենայի  
վրայ լուս ունիմ, կտեսնես, թէ ինչպէս ձեռաց կմխիթարէ  
քեզ:

—Մնաս բարով, եղբար, —ասաց նա Արկադիլին՝ ար-  
դէն կառք նստելուց լետու, և ակոռի կտրան նստած զոյգ  
ճայերը ցոյց տալով աւելացրեց. —Ահա քեզ. ուսումնասիրիր:

—Ալդ ի՛նչ է նշանակում, —հարցրեց Արկադիլին:

—Ի՛նչ, Միթէ ալդքան թոյլ ես բնական պատմութիւ-  
նից, կամ մոռացել ես, որ ճալը ամենապատուաւոր, տնարար  
թաշունն է: Քեզ օրինակ... Մնաք բարով, սինիօր:

Կառքը թխթխկաց ու գնաց:

Բազարովը ուղիղն ասաց. Երեկոցան կատեալի հետ  
խօսելիս՝ Արկադիլն բոլորովին մոռացել էր իւր դաստիարակ-  
չին: Նա արդէն սկսել էր ենթարկուել կատեալի ազդեցու-  
թեան, և սա ալդ զգում էր, և չէր զարմանում: Միւս օրը  
Արկադիլն Մարինո պիտի գնար Նիկալա Պետրովիչի մօտ:  
Աննա Սերգէենան չէր ուզում երիտասարդներին խանգարել,  
և միմիայն վախճութեան համար նրանց խիստ երկար չէր  
թողնում մնակ: Նա մեծահոգութեամբ նրանցից հեռացրեց  
իշխանուհուն, որը առաջիկայ ամուսնութեան լուրն իմանա-  
լով կատաղութեան արցունք թափեց: Սկզբում Աննա Սեր-  
գէենան վախենում էր, թէ մի գուցէ նրանց երջանկութեան  
տեսարանը իրեն համար մի քիչ ծանր թուալ. մինչդեռ բո-  
լորովին հակառակը եղաւ. —ալդ տեսարանը ոչ միայն ծանր  
չթուեցաւ, հապա դա նրան զբաղեցնում, դա նրան խանդա-  
ղատեցնում էր վերջապէս: Աննա Սերգէենան ալդ բանին թէ

ուրախացաւ և թէ տրտմեցաւ: «Ինչպէս երևում է իրաւացի է Բաղարովի ասածը», մտածեց նա,—հետաքրքրութիւն, լոկ հետաքրքրութիւն էր, և սէր դէպի հանգիստը, և եսականութիւն....

—Զը՛, տղաւք,—ասաց նա բարձր ձայնով,—սէրը արհեստական զգացմունք է:

Բայց ոչ կատեան և ոչ էլ Արկադիին նրա ասածը նոյն իսկ չհասկացան: Նրանք խոյս էին տալիս նրանից. նրանց մտքից չէր հեռանում այն խօսակցութիւնը, որ ակամայ լսել էին: Ասենք Աննա Սերգէեւնան շուտով նրանց հանգստացրեց, և արդ անկը մի դժուար բան չէր՝—նա ինքը հանգստացաւ:

## XVII

Ինչքան ծերուկ Բաղարովները քիչ էին սպասում իրենց որդու դալուն, այնքան աւելի եղաւ նրանց ուրախութիւնը նրա անակնկալ վերադարձի վրա: Արինա Վլասինան այնքան վեր ու վարի մէջ եղաւ, այնքան դէս ու դէն ընկաւ տան մէջ, որ Վասիլի Իւանովիչը նրան «կազաւահաւի» նըմանեցրեց՝—ծիշտ որ կարճիկ կոփտի կտրած պոչը նրան մի տեսակ թռչնի տեսք էր տալիս: Մինչդեռ ինքը, Վասիլի Իւանովիչը մոռնում էր միայն ու չիւրուխի սաթը բերանի մէջ մի կողմ առած կծոտում, մէկ էլ ձեռքով բռնում էր վիզը ու գլուխը պտտում, ասես թէ ուզում լինէր փորձել, թէ գլուխը պի՞նդ է ամրացրած, և լանկարծ լայն բաց էր անում բերանը և առանց ձայն հանելու քրքշում:

—Ահագին, վեց չաբաթ ժամանակով եմ եկել, ծերուկ,—ասաց նրան Բաղարովը.—ուզում եմ պարապել, տես, չխանդարես:

—Այնպէս կխանդարեմ քեզ, որ երեսիս պատկերն էլ մոռանաս,—պատասխանեց հալըր:

Նա իր խօսքը կատարեց: Որդուն դարձեալ առանձնասենեակը տալով, նա հասարեա թէ թաք էր կենում նրանից, և կնոջն էլ զսպեց, որ աւելորդ քնքշութեան զգացմունքներ չարտալալտէ: «Մենք, հոգի ջան,—ասում էր կնոջը,—առաջի եկածին Ենիշկային մի փոքր ձանձրացրինք. պէտք է արժանաւելի խելօք լինել: Արինա Վլասինան համաձայնում էր ամուսնուն, բայց դրանից շատ բան չէր շահւում, որովհետեւ

Նա իւր որդուն միայն ճաշի միջոցին էր տեսնում և բոլորովին վախենում էր հետը բերան բանալ, խօսել, Ներսիմի հագլիւ «Ննիւկենկա» կ'ասէր,—և դ'ու Բազարովը ետը չդարձած, կ'ժողովէր օւղիկիւլի կապերն ու կ'թօթովէր. «ոչինչ, ոչինչ, բան չկար, և լեռով կ'գնար Վասիլի Իվանովիչի մօտ ու երեսը ձեռքին դէմ տուած, կ'ասէր. «ինչպէս անէինք, որ մի իմանալինք, թէ Ննիւկան ալսօր ճաշին ինչ կ'ուղի, բժրչ թէ չի»։—«ինչի չէիր ինքզ հարցնում «իրեն»։ «Հապն որ դահլան տանմնո, Սակալն շուտով Բազարովը ինքը դադարեց սենեակում կողպուելուց»։—աշխատելու տենդն անցել էր և տեղի տըռեկ թախծալի տաղտուկի ու խաւ անհանգստութեան, հարօրինակ լողնածութիւն էր նկատուում նրա բոլոր շարժումների մէջ. մինչև անգամ նրա հաստատուն ու լաւաջընթաց խիզախ քալումածը փոխուել էր։ Նա դադարեց մենակ զբօսնելուց և սկսեց ընկերութիւն փնտրել. թէլը ընդունարանում էր խմում, Վասիլի Իվանովիչի հետ բանջարանոցում դքօսնում ու լուռ ու մունջ ծխում. մի անգամ էլ հալր Ալեքսէյի մասին հարցրեց, Վասիլի Իվանովիչը սկզբում ուրախացաւ ալս փոփոխութեանը, բայց նրա ուրախութիւնը երկար չքաշեց. «Ննիւկան աչքս վախեցնում է», ծածուկ դանգաւում էր նա կնոջը. «չէ թէ անգոհունակ է կամ դալրացած, ալզ որ լինէր՝ բան չկար. բայց նա վշտացած է, տխուր է—ահա վատը։ Դարունակ լուռ է. գոնէ մեր վրան նեղանար. նիհարում է, երեսի գոլն էլ մի գոլն չէ»։—«Արարիչ Աստուած» շնչում էր պառաւը. «վիզը համալիլ կ'կախէի, բայց գիտեմ, չի թողնելու»։ Վասիլի Իվանովիչը մի քանի անգամ փորձեց ամենազգուշ կերպով Բազարովին հարց ու փորձ անել նրա պարապմունքի, առողջութեան, Արկադիի մասին... Բայց Բազարովը զժկամակելով ու անհոգ պատասխան էր տալիս և մի անգամ, նկատելով, որ հալրը խօսակցութեան մէջ աշխատում է բան փորփրել, սրտնեղած ասաց. «Ի՞նչ ես շարունակ չորս կողմս պտուտ պտուտ անում։ Այս արածդ առաջուանից էլ վատ է»։—«Ի՞նչ էլ, էլ, էլ, բան չկալ, շտապով պատասխանեց խեղճ Վասիլի Իվանովիչը։ Առանց հետեանքի մնացին նաև նրա քաղաքական ակնարկները։ Մի անգամ խօսք բանալով գիւղացիների մօտալուտ ազատութեան, և առաջադիմութեան վրալ, լուս ունէր որդու համակրութիւնը դարձեցնել, բայց նա անտարբերութեամբ ասաց. «երեկ անցնում եմ ցանկապատի մօ-